ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 մարտի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

29
(3060)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ 5 ՏԱՐԻ ԱՆՑ ԴԵՌ ՈՐԵՎԷ ՔԵԿՈՒՅՑ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

44-օրյա պատերազմից անցել է 5 տարի, սակայն մինչեւ օրս պատերազմում զոհված եւ նահատակված անձանց թիվն ավելանում է:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցմամբ դիմել էր ՀՀ քննչական կոմիտե եւ խնդրել էր տրամադրել 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված եւ անհետ կորած անձանց մասին հետեւյալ տեղեկությունները՝

- քանի անձ է զոհվել 44-օրյա պատերազմի ընթացքում, նրանցից քանիսն են եղել ժամկետային զինծառայող, քանիսը՝ պայմանագրային, քանիսը՝ կամավորագրված, քանիսը՝ աշխարհազորային:
- 44-օրյա պատերազմի ավարտից հետո քանի անհետ կորած զինծառայող կա:

ՀՀ քննչական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին պատասխանել են, որ փետրվարի 20-ի դրությամբ 2020 թվականի 44-օրյա մարտական գործողությունների ընթացքում զոհվել է 3 941 անձ, որից՝

1702-ը՝ ժամկետային զինծառայող,
860-ը՝ կամավորական,
864-ը՝ պահեստազորային,
143-ը՝ այլ զորքերի զինծառայողներ,
44-ը՝ քաղաքացիական անձինք:

Մինչ օրս անհայտ է 172 զինծառայողի եւ 19 քաղաքացիական անձի գտնվելու վայրը:

Եվս մեկ անգամ հարկ է հիշեցնել, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողովը մինչ այսօր՝ 5 տարիների ընթացքում, չի հրապարակել որեւէ մաս գուցե նաեւ անպատրաստ զեկույցից:

Այս թվերին զուգահեռ հարկ է նշել, որ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի ընթացքում զոհվածների ընդհանուր թիվը կազմել է 2900 զինվորական: 14 զինվորական համարվում է անհետ կորած:

Նշենք, սակայն, որ սա պաշտոնական վարկածն է, որը միանշանակ կոծկում է իրականությունը: Իսկ ոչ պաշտոնապես դեռ պատերազմի ավարտից անմիջապես հետո առանձին մասնագետներ կարծիք են հայտնել, որ Ադրբեջանի իրական զոհերը պաշտոնական հրապարակվելիք թվերին գերազանցելու են մի քանի անգամ:

Հարկ է նշել, որ քննչական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեցին նաեւ, որ 2024 թվականի դեկտեմբերից մինչեւ ս.թ. փետրվարի 16-ն իրականացված աշխատանքների արդյունքում 6 զինծառայողների հարազատներ ընդունել են զոհվելու փաստը եւ կատարել հուղարկավորում: 82 զինծառայողների հարազատները հրաժարվում են հուղարկավորել դատագենետիկական փորձաքննությունների արդյունքում նույնականացված մարմինները:



Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, որ 2020 թվականի սեպտեմբերին ընդունված օրենքով փորձում էր պայքարել քրեական կարգավիճակ ստանալու, տալու եւ պահպանելու դեմ, հիմա՝ 5 տարի անց, հասկացել է, որ Ռուստամ Բադասյանի բերած օրինագիծը ձախողեց քրեական ենթամշակույթի դեմ պայքարը: Փետրվարի 12-ին ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը ՀՀ ԱԺ-ում հայտարարեց, որ գործող օրենքում փոփոխություններ են պատրաստում, որպեսզի քրեական բարձր աստիճանակարգ ունենալու կարգավիճակի գոյությունը եւ ունենալը դառնա քրեական հանցագործություն: «Ժողովուրդ» օրաթերթին ՔՊ-ականները բացատրեցին, որ Կառավարությունը փորձում է գնալ հարեւան Վրաստանի օրինակով. կձերբակալեն այսպես ասած «օրենքով գողերին», տեսախցիկի առջեւ հարց կտան. «Դուք «օրենքով գո՞ղ» եք, կամ քրեական աստիճանակարգում բարձր դիրք ունե՞ք, թե՞ ոչ»: Եթե մարդը պատասխանեց՝ «այո», ուրեմն կկալանավորվի, եթե «ոչ»՝ ազատ կարձակեն: Բայց «ոչ» պատասխանն էլ իր խնդիրներն է առաջացնելու, քանի որ «օրենքով գողը», ըստ լեգենդների, չի կարող չխոստովանել իր կարգավիճակի մասին. նա կհեղինակազրկվի: Ինչ կտա այս փոփոխությունների ընդունումը՝ բարդ է ասել, քանի որ դժվար է պատկերացնել, թե ինչպես պետք է հարցը ձեւակերպեն, որ քրեական աշխարհի ներկայացուցիչը մանեւրելու տեղ չունենա: Հիշեցնենք՝ նախարար Սարգսյանը հայտարարել էր. «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի շրջանակներում խնդիր ունենք օպերատիվ հետախուզական տվյալներն ապացույցի վերածելու մասով, որովհետեւ շատ հաճախ կարող են լինել այնպիսի օպերատիվ տվյալներ, որոնք, այո, կարող են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման գոյության մասին վկայել, բայց երբ խոսում ենք քրեական վարույթի մասին, որտեղ պետք է քրեական հետապնդում հարուցվի, շատ կարեւոր է տվյալը վերածել ապացույցի, որը փաստացի չի ստացվում»: Այսինքն՝ նախարարը հրապարակավ խոստովանեց այն, ինչի մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրում էր օրենքի ընդունումից՝ 2020 թվականի սեպտեմբերից սկսած:

«Ժողովուրդ» օրաթերթը, իր նախորդ համարներում անդրադառնալով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի դրույթներին, գրել էր, որ Սահմանադրական դատարանը փակուղում է: Կասեցրել է այդ օրենքի մասով գործի քննությունը. ո՛չ հակասահմանադրական է ճանաչում, ո՛չ էլ սահմանադրական, իսկ Դատախազությունն այդ ընթացքում մարդկանցից հիմնականում հաշտության հիմքով ունեցվածք է խլում: Հիշեցնենք, որ Սահմանադրական դատարանի վարույթում քննվող, 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը ստուգելու վերաբերյալ գործը կասեցվել է, քանի որ ՍԴ-ն որոշել էր դիմել ԵԽ մասնագիտական Վենետիկի հանձնաժողովին՝ պարզելու, թե արդյոք օրենքը համապատասխանում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային եւ սահմանադրական չափանիշներին, մասնավորապես սեփականության իրավունքի եւ արդար դատաքննության իրավունքի պաշտպանության համատեքստում, թե ոչ: Եվ ահա, 2022 թվականի դեկտեմբերի 19-ին ստացել է Վենետիկի հանձնաժողովի մասնագիտական կարծիքը: *Մասնագիտական կարծիքը կարող եք կարդալ ArmLur.am կայքում՝ «Վենետիկի հանձնաժողովի պատասխանը ՍԴ-ին. ամբողջական» հոդվածում (24.02.2025):*

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու վեճը նախորդ շաբաթ Սպիտակ տանը թեժ զարգացումներ է ապահովել ռուս-ուկրաինական պատերազմի մարտադաշտում: «Ժողովուրդ» օրաթերթը ռուսական քաղաքական շրջանակներից տեղեկացավ, որ մյուս շաբաթ Ուկրաինայի նախագահը կմեկնի Վաշինգտոն՝ խաղաղության բանակցության եւ Թրամփի հետ հաշտության համար: Հիշեցնենք, որ Թրամփն արդեն դադարեցրել է Ուկրաինային զենք տրամադրելու գործընթացը: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրման վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ դեռ չկան: Ռուսական քաղաքական շրջանակներից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՌԴ նախագահը Թրամփի խաղաղության կոչին զուգահեռ պատերազմն ավարտելու քայլերի հաջորդականությունն է սահմանել՝ առաջարկելով փուլային լուծում: Վլադիմիր Պուտինն իր ամերիկյան գործընկերներին ասել է, որ Զելենսկու հետ կկնքեն խաղաղության հաստատման մասին փաստաթուղթ, որով նախ կհայտարարվի հրադադար, եւ կողմերը, որտեղ կանգնած են, կմնան այդ տեղում ու այն կդառնա նոր սահմանային գոտի:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑ

«ԺԱՄԱՆԱԿԸ ԳԱ՝ ԿՄՏԱԾԵՆՔ». ՇԻՐԱԿ ԹՈՐՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ազգային ժողովի ՔՊ-ական պատգամավոր Շիրակ Թորոսյանի հետ:

-Պարոն Թորոսյան, Նիկոլ Փաշինյանը հոդված էր հրապարակել ճանապարհների վերաբերյալ: Ըստ վարչապետի՝ Ադրբեջանի համար Հայաստանով անցնող ճանապարհները բաց են. (մեջբերում) «Բայց հենց հիմա, զուտ ֆիզիկական ենթակառուցվածքի պատրաստության առումով, օրինակ, բեռնատարները կարող են Լաչին-Կոռնիձոր հատվածով Կոռնիձոր անցակետով մուտք գործել Հայաստանի Հանրապետության տարածք, մեր ճանապարհներով երթեւեկել մինչեւ Հայաստան-Թուրքիա սահման եւ Մարգարա անցակետով մուտք գործել Թուրքիա: Նույնը եւ հակառակ ուղղությամբ: Նման տարանցիկ բեռնափոխադրման համար անհրաժեշտ ֆիզիկական ենթակառուցվածքը հիմա էլ պատրաստ է, մնում է դե յուրե որոշում կայացնել: Մենք պատրաստ ենք նման որոշում կայացնել, եթե Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից կա հետաքրքրվածություն»: Այսինքն՝ հայկական կողմը չպետք է վերահսկողություն իրականացնի եւ ադրբեջանական բեռնատարները կարող են անարգել անցնել սահմանով, եւ չվերահսկվի, թե ինչ են տանում: Ի՞նչ եք մտածում այս հարցի վերաբերյալ:

-Ես զարմանում եմ՝ ինչպես եք դա հասկացել:

-Պարոն Թորոսյան, իսկ Դո՞ւք ինչպես եք հասկացել: Ձեր հասկացածը ո՞րն է:

-Դա ընդհանուր հասկացողություն է, եւ կապ չունի, թե ես, իմ սուբյեկտիվ ընկալմամբ, ինչպես եմ հասկացել: Ցանկացած երկրի բեռնատար, եթե մտնում է Հայաստան եւ դուրս է գալիս ու մտնում այլ երկիր, ստուգվում է: Խոսքը վերաբերում է հոգեբանական խնդրին: Օրինակ՝ ադրբեջանցի վարորդի հոգեբանական խնդրին: Եթե իրենց դեպքում կա նման խնդիր, ապա թուրք վարորդները այդ խնդիրը չունեն, քանի որ իրենք, միեւնույնն է, Վրաստանի տարածքով միշտ էլ գալիս են Հայաստան, եւ հայ վարորդները Վրաստանի տարածքով գնում են Թուրքիա: Սրա մասին է խոսքը:

-Այսինքն ստուգվելո՞ւ են:

-Նրանք մաքսային ընթացակարգեր են անցնելու, իհարկե պետք է ստուգվեն, ինչի՞ մասին է խոսքը, իսկ ո՞վ է ասել, որ չեն ստուգվելու: Դուք այդ տեքստից հասկացել եք, թե չե՞ն ստուգվելու: Խոսքը միայն հոգեբանական խնդրի մասին է: Ադրբեջանցի վարորդը Հայաստանի տարածքում ընդամենը ունի հոգեբանական խնդիր. ադրբեջանական բեռնատարները կարող են Հայաստան մուտք գործել թուրք վարորդներով, եթե ուզեն այդպես:

-Իսկ, ըստ Ձեզ, ադրբեջանական կողմը մեր նկատմամբ նույն կերպ հոգատար, բարյացակամ կլինի՞, որ մտածի՝ հանկարծ հայ վարորդները հոգեբանական խնդիրներ չունենան:

-Իսկ Դուք ի՞նչ եք կարծում... բնականաբար հայ վարորդներն էլ կունենան հոգեբանական խնդիր, իսկ մենք նրանց ո՞ր վարորդներով ենք փոխարինելու: Ասենք՝ ադրբեջանցիները, ենթադրաբար, կարող են փոխարինվել թուրք վարորդներով: Հիմա Դուք առաջարկեք՝ մենք ի՞նչ վարորդներով փոխարինենք:

Երբ գա ժամանակը եւ պարզվի, որ մեր վարորդները հոգեբանական խնդիր ունեն, այդ ժամանակ կմտածենք:

-Չե՞ք կարծում, որ ամեն դեպքում անհանգստություններ կլինեն, եւ հնարավո՞ր է՝ ռուս վարորդների հետ համագործակցություն լինի:

-Ես հիմա չեմ կարող ասել, թե ինչ է հնարավոր: Գանք հասնենք այն շեմին, որ իսկապես ադրբեջանական բեռնատարները մտնում են Հայաստան եւ հայկական բեռնատարները՝ Ադրբեջան, նոր այդ մասին հստակ գործողություններ կնշանակվեն:

-Պարոն Թորոսյան, տեւական ժամանակ է ամբողջ համացանցը ողողված է հայ ռազմագերիների խոշտանգումների լուսանկարներով: Չտարանջատենք, բայց հիմնականում Ռուբեն Վարդանյանի ու Բակո Սահակյանի լուսանկարներն են տարածվում, երբ Դուք տեսաք այդ նկարները, ի՞նչ զգացիք:

-Ես կարծում եմ, որ մենք չպետք է տարանջատենք նրանց. մեր բոլոր հայրենակիցներրի համար այս իրողությունը շատ մտահոգիչ է: Բաքվում գտնվող ապօրինի դատավարության գործընթացում գտնվող մեր հայրենակիցների կարգավիճակը շատ ցավալի է: Ես կարծում եմ, որ ոչ միայն ֆիզիկական, ենթադրաբար նաեւ հոգեբանական ներգործության միջոցներով են ճնշում մեր հայրենակիցներին: Կարծում եմ՝ դրա նպատակն այն է, որ ադրբեջանական կողմը ձգտում է ստիպել մեր հայրենակիցներին իրենց համար ցանկալի խոստովանություն կորզել:

-Մինչ այժմ, որքան պաշտոնական աղբյուրներից հրապարակվել է, ընդհակառակը՝ հայ գերիները, անգամ նման ճնշված վիճակում գտնվելու պարագայում, հերքում են ադրբեջանական շինծու մեղադրանքները: Այսինքն՝ նույնիսկ այդ պարագայում, նրանց չի հաջողվում ինչոր բան կորզել: Այս հարցի վերաբերյալ ի՞նչ կարծիք ունեք:

-Ես ասում եմ, թե նպատակը որն է: Ի պատիվ մեր հայրենակիցների՝ նրանք դիմակայում են, բայց Ադրբեջանի նպատակն այն է, որ ֆարս բեմադրություն է իրականացնում՝ հետագայում դրա արդյունքներն իր համար նպաստավոր պայմաններում օգտագործելու պայմանով:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՌԴ ԴԵՍՊԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպան Սերգեյ Կոպիրկինը հայտարարել է, որ Երեւանի եւ Մոսկվայի միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հարցը շարունակում է մնալ հայ-ռուսական հարաբերությունների օրակարգում:

«Մի բան կարող եմ ասել, որ ռազմատեխնիկական համագործակցության թեման կա, դա մեր հարաբերությունների օրակարգում է:

Պարզ է, որ ստեղծված իրավիճակը որոշակի ազդեցություն ունի գործընթացների վրա, բայց մենք այս ոլորտում կուտակել ենք շատ մեծ ծավալ: Ռուսական կողմում կա քաղաքական կամք՝ պահպանելու այն, ինչ ունենք: Հարցերը քննարկվում են, որոշ հարցեր լուծվում են, որոշ հարցեր էլ դեռ քննարկման փուլում են: Բայց կամք կա խնդիրները լուծելու»,- նշել է ՀՀ-ում Ռուսաստանի դեսպան Տ. Կոպիրկինը: Նրա կարծիքով՝ Հայաստանում ռուսական 102-րդ ռազմաբազայի եւ ՌԴ սահմանապահների ներկայությունն է ապահովում Հանրապետության անվտանգությունը, այլ ոչ թե արեւմտյան ուժերի խոստումները:

«Որքան ինձ հայտնի է, անվտանգության ոչ մի [արեւմտյան] երաշխիք, որը համադրելի կլիներ ռուս-հայկական հարաբերությունների հետ, ոչ ոք Հայաստանին չի տվել: Համենայնդեպս, որեւէ փաստաթուղթ, հայտարարություն չեմ տեսել: Անվտանգության ոլորտում մեր համագործակցության հիմնական բաղադրիչները, ռազմաքաղաքական դաշինքը պահպանվում են: Ռուսական բազան շարունակում է մնալ այստեղ, մեր սահմանապահների ներկայությունը սկզբունքային առումով չի փոխվել, եւ դա բավականին դրական է գնահատում Հայաստանի ղեկավարությունը»,-նշել է նա:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՍԽԱԼԸ

Դեղերի դրոշմապիտակների խնդիրը լուծված է: Այս մասին Ազգային ժողովում հարց ու պատասխանի ժամանակ ասել է Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով ԱԺ առողջապահության հարցերով հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանի հարցին, թե ինչու է տարվա սկզբից Պետական եկամուտների կոմիտեում դեղերի դրոշմապիտակների դեֆիցիտ առաջացել: Արսեն Թորոսյանը նշել էր, որ դրոշմապիտակների դեֆիցիտի մասին ահազանգեր է ստացել դեղ ներկրող կազմակերպություններից: «Ուզում եմ հասկանալ՝ ինչու է այդպես, հաշվի առնելով, որ մենք ենք օրենսդրորեն պարտադրել այդ տնտեսվարողներին փակցնել այդ դրոշմապիտակները, որպեսզի հետագծելիություն ունենանք: Եվ կարծես թե տնտեսվարողները նաեւ վճարում են դրանց համար: Եվ եթե մենք չենք տրամադրում, իրենք չեն կարողանալու վաճառել ներկրված դեղերը», - ասել էր Արսեն Թորոսյանը:

«Դուք շաբաթ օրը ինձ նամակ էիք գրել դրա վերաբերյալ էլեկտրոնային փոստով, ես նույն օրը վերահասցեագրել եմ Պետեկամուտների կոմիտեի նախագահին, եւ նույն օրը ստացել եմ պատասխան, որ երկուշաբթի այդ հարցը լուծված կլինի: Եվ իմ սխալն է եղել, որ ես պատասխանը չեմ վերահասցեագրել ձեզ: Բայց լավ առիթ է... ես՝ հիմա...», - ասել է Նիկոլ Փաշինյանը ու, նայելով հեռախոսին, հավելել. «Գրեց, որ հարցը լուծված է»:

ԶԲԱՂՎՈՒՄ ԵՆ ՕԴԻ ՄԱՔՐՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Օդի աղտոտվածության մակարդակի առումով երկու խնդիր ենք լուծելու՝ բարելավելու առողջապահական եւ աշխատանքի տեսչության գործառույթները եւ լուծել տեխնիկական հագեցվածության խնդիրը, որպեսզի գնահատականները ճիշտ լինեն:

Այս մասին երեկ խորհրդարանում կառավարության նիստին հայտարարել է Հայաստանի Հանրապետության կառավարության փոխվարչապետ Միեր Գրիգորյանը: Նրա խոսքով՝ աժիոտաժի պատճառն այն է, որ շինհրապարակներում կամ որտեղ այս խնդիրը սուր է, եւ սենսորներ են տեղադրված, դրանցից եկող տեղեկատվությունը խնդրահարույց պատկեր է տալիս: «Բայց ամեն ինչ այնպես չէ, ինչպես երեւում է հանրային ասպարեզում»,- նկատել է Գրիգորյանը: Նա պարզաբանել է, որ իշխանությունները ներկայումս զբաղվում են այդ հարցով վարչապետի հանձնարարականով:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԲԱՑ ԵՆ ԹՈՂԵԼ

«Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանի նկատմամբ սահմանվել է վարչական հսկողություն, գրավ եւ չբացակայելու արգելք», - հայտնում է քաղաքապետարանի խոսնակ Հայկ Կոստանյանը՝ նշելով, որ Կարոյանին կալանավորելու միջնորդությունը չի բավարարվել: Հիշեցնենք, որ Կարոյանը նախօրեին ձերբակալվել էր դեռեւս անցյալ ամիս քաղաքապետարանի պաշտոնյաների ձերբակալության նույն գործի շրջանակում:

Նշենք, որ Արսեն Կարոյանը 2020 թվականի փետրվարին է նշանակվել աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ:

Այս տարվա փետրվարի սկզբին հաղորդվեց, որ չորս անձ է կալանավորվել, նրանցից 2-ը Երեւանի քաղաքապետարանի պաշտոնյաներ են, մյուս երկու կալանավորվածները քաղաքապետարանի նախկին պաշտոնյաներ են: Նրանք մեղադրվում են կաշառք ստանալու, տալու եւ օժանդակելու մեջ:

Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետարանում ու վարչական շրջաններում վերջին շրջանում էլի ձերբակալություններ են եղել:

Մոտավորապես 4 ամիս առաջ իրավապահները Կենտրոնի թաղապետարանում էին, չորս հոգու էին կալանավորել՝ պաշտոնատար անձանց կողմից խմբով կաշառք ստանալու եւ քաղաքացու կողմից կաշառք տալու մեղադրանքով:

Դրանից առաջ էլ քննիչները Արաբկիրի թաղապետարանից բերման էին ենթարկել վարչական շրջանի ղեկավար Արամ Ազատյանին. ըստ նախաքննական մարմնի՝նա մեղադրվում է կաշառք ստանալու եւ պաշտոնեական դիրքի չարաշահման հոդվածով, սակայն մեղադրանքը չի ընդունում: Այս գործով եւս 12 մեղադրյալ կա, բայց նրանք բոլորն արդեն ազատության մեջ են, իսկ Արաբկիրի թաղապետն արդեն 9 ամիս է, ինչ բանտում է: Այս գործն արդեն դատարանում է:

ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

«Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մանե Թանդիլյանը երեկ տեղափոխվել է հիվանդանոց: Ըստ առողջապահության նախարարության մամուլի բաժնի՝ Թանդիլյանը բժշկական հաստատություն տեղափոխվել է շտապօգնության մեքենայով եւ եղել է բժիշկների վերահսկողության տակ: Բժշկական գաղտնիքից ելնելով՝ նախարարությունից նրա առողջական վիճակի մասին այլ մանրամասներ չնշեցին:

Հիշեցնենք, որ Մանե Թանդիլյանն արդեն վեցերորդ օրն է, ինչ հացադուլ է հայտարարել՝ հաջակցություն Բաքվում ապօրինի պահվող Լեռնային Ղարաբաղի նախկին պետական նախարար Ռուբեն Վարդանյանի եւ մյուս հայ գերիների: Ռուբեն Վարդանյանը փետրվարի 17-ից գտնվում է հացադուլի մեջ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐԸ

ԱՄՆ-Ն «ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ» ԿԿԱՅԱՑՆԻ

ԱՄՆ Կոնգրեսի զույգ պալատների առջեւ Սպիտակ տան ղեկավարը ամփոփել է իր նախագահական երկրորդ ժամկետի առաջին շաբաթները: Նախագահ Դոնալդ Թրամփը ելույթ ունեցավ ԱՄՆ Կոնգրեսում՝ ամփոփելով իր նախագահության շաբաթները: Օրենսդիրների առաջ ելույթը Թրամփին հնարավորություն է տվել հրապարակայնորեն ներկայացնել իր տեսակետները տնտեսական եւ ներգաղթին վերաբերող քաղաքականության վերաբերյալ, սասարել դաշնային աշխատողների թվի նշանակալի կրճատումները ու Զելենսկու հասցեին ուղղված սուր քննադատությունը:

ArmLur.am-ը ներկայացնում է Դոնալդ Թրամփի ելույթի հիմնական կետերը:

«Ես վերջ դրեցի պետական գրաքննությանը եւ վերադարձրի խոսքի ազատությունը»:

«Իմ առաջնահերթությունները՝ փրկել մեր տնտեսությունը: Վերջին վարչակազմը աղետ բերեց՝ ամենավատ գնաճը թերեւս երկրի պատմության մեջ»:

«ԱՄՆ-ն Ալյասկայում կառուցում է աշխարհի ամենամեծ գազատարներից մեկը: Ճապոնիան եւ Հարավային Կորեան ցանկանում են միանալ նախագծին: Ներդրումները կազմում են տրիլիոն դոլարներ»:

«Այս շաբաթ Միացյալ Նահանգները «պատմական որոշում» կկայացնի՝ զգալիորեն մեծացնելու կարեւոր օգտակար հանածոների եւ հազվագյուտ հողային մետաղների ներքին արտադրությունը»:

«Այսօր ես շատ կարեւոր նամակ ստացա Զելենսկիից. նա պատրաստ է գալ բանակցությունների՝ մեկ սեղանի շուրջ: Ուկրաինան պատրաստ է ստորագրել հազվագյուտ հանքանյութերի մասին պայմանագիրը»:

«Ռուսաստանից նույնպես ուժեղ ազդանշաններ ենք ստանում, որ նրանք պատրաստ են խաղաղության. հրաշալի չէ՞: Ժամանակն է վերջ տալ այս պատերազմին. երկու կողմերն էլ պետք է խոսեն: Եվրոպան փորձում է առաջատար դեր ստանձնել ուկրաինական հակամարտությունը դադարեցնելու գործում»:

Հայտնի է դարձել, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը դադարեցրել է Ուկրաինային հատկացվող ռազմական օգնությունը՝ անցած շաբաթ Սպիտակ տանը Զելենսկու հետ տեղի ունեցած սուր քննարկումից հետո: Զելենսկին ավելի ուշ հայտարարությամբ էր հանդես եկել եւ պնդել, որ Ուկրաինան պատրաստ է որքան հնարավոր է շուտ նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ կայուն խաղաղության համար:

Հիշեցնենք, որ Զելենսկիի մամուլի քարտուղար Սերգեյ Նիկիֆորովը «Լիգա»-ին հաստատել էր, որ Ուկրաինայի նախագահի կողմից որեւէ «նամակ» չի եղել, եւ Թրամփը խոսել է X սոցիալական ցանցում արված գրառման մասին: Հաղորդագրությունը, որի մասին ասել է Թրամփը, Զելենսկիի գրառումն է X-ում, որտեղ նա ափսոսանք էր հայտնել, որ Սպիտակ տանը տեղի ունեցած հանդիպումը «չանցավ այնպես, ինչպես նախատեսված էր»: Նա շնորհակալություն էր հայտնել ԱՄՆ-ին եւ անձամբ Թրամփին Ուկրաինային ցուցաբերած օգնության համար եւ ընդգծել, որ Ուկրաինան անվերջանալի պատերազմ չի ցանկանում: «Ես եւ իմ թիմը պատրաստ ենք աշխատել նախագահ Թրամփի ուժեղ առաջնորդության ներքո՝ տեւական խաղաղության հասնելու համար», - գրել էր Ուկրաինայի նախագահը: Բացի այդ Զելենսկին հայտարարել էր, որ Կիեւը պատրաստ է «ցանկացած ժամանակ եւ ցանկացած ձեւաչափով» ստորագրել հանքային պաշարների վերաբերյալ համաձայնագիրը, որը քայլ է «դեպի ավելի մեծ անվտանգություն եւ ամուր անվտանգության երաշխիքներ»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՐԱԿ ՉԵՆ ԲԱՑԵԼ

Ադրբեջանի ՊՆ հաղորդագրությունը, թե իբր մարտի 4-ին՝ ժամը 22:05-ի սահմաններում, ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները կրակ են բացել սահմանագոտու հարավարեւելյան հատվածում տեղակայված ադրբեջանական դիրքերի ուղղությամբ, չի համապատասխանում իրականությանը: Այս մասին հայտնում է ՀՀ ՊՆ-ն: Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմն առաջարկել է հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի եւ/կամ այդ մասին տեղեկությունների հետաքննության Հայաստան-Ադրբեջան համատեղ մեխանիզմ ստեղծել, ինչին մինչեւ օրս Ադրբեջանը չի արձագանքել:

«ԱՏՈՒՄ» Է ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել է, որ Մինսկը պատրաստ է բանակցություններ կազմակերպել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու միջեւ: Այս մասին նա հայտարարել է ամերիկացի բլոգեր Մարիո Նաուֆալի հետ զրույցում: «Եկեք, կնստենք այստեղ, հանգիստ, առանց աղմուկի, առանց բղավելու, կպայմանավորվենք: Ուստի, փոխանցեք Թրամփին՝ ես այստեղ Պուտինի եւ Զելենսկու հետ սպասում եմ նրան, մենք կնստենք եւ հանգիստ համաձայնության կգանք: Եթե ցանկանում եք համաձայնության գալ»,-նշել է Լուկաշենկոն: Միաժամանակ նա հրաժարվել է միջնորդի դերից Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ բանակցություններում: Բելառուսի նախագահի խոսքով՝ինքը «ատում է» միջնորդությունը, քանի որ դա նշանակում է երկու կողմերի միջեւ դիրքորոշում ընդունել՝ առանց գործընթացի վրա ազդելու իրական հնարավորության:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ՕՐՀՆԵՐԳՈՒՄ

ՀՀ օրհներգի տողերի դասավորությունը կփոխվի: Ազգային ժողովը երեկ 64 կողմ, 5 դեմ, 0 ձեռնպահ ձայներով 2-րդ ընթերցմամբ եւ վերջնականապես ընդունեց «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը: «Հայաստան» խմբակցությունը չմասնակցեց քվեարկությանը: Խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը վարման կարգով հայտարարեց, որ հետագայում հանդես են գալու նոր փոփոխությունների նախագծով:

ԳՐԱՄԵՆՅԱԿԸ ԿՓԱԿՎԻ

Ադրբեջանի կառավարությունը տեղեկացրել է Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցչությունը փակելու մտադրության մասին: «Ներկայումս պահպանվում են իշխանությունների հետ շփումները: Դա մեր կոնֆիդենցիալ եւ երկկողմ երկխոսության մի մասն է», - ասել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հասարակայնության հետ կապերի մասնագետ Աուրելի Լաշանը:

ԴԱՏԱՎՈՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Նախագահ Վահագն Խաչատուրյանը փետրվարի 18-ին հրամանագիր է ստորագրել, որով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացման դատավոր է նշանակվել Շուշանիկ Ավագիմյանը:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ «ԲԱՑԱՀԱՅՏԵՆ» «ԳՈՂԱԿԱՆՆԵՐԻՆ»

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱԶԳԱԿԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Փետրվարի 12-ին ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի՝ Հայաստանի Ազգային ժողովում հնչեցրած հայտարարությունից ոչ մեկ դարձավ Նիկոլ Փաշինյանի կառավարության հերթական ձախողման մասին. այսպես ասած՝ «օրենքով գողերի» դեմ պայքարը չի հաջողվում:

Ըստ նախարար Սարգսյանի՝ «քրեական ենթամշակույթի դեմ պայքարի շրջանակներում խնդիր ունենք օպերատիվ հետախուզական տվյալներն ապացույցի վերածելու մասով, որովհետեւ շատ հաճախ կարող են լինել այնպիսի օպերատիվ տվյալներ, որոնք, այո, կարող են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման գոյության մասին վկայել, բայց երբ խոսում ենք քրեական վարույթի մասին, որտեղ պետք է քրեական հետապնդում հարուցվի, այստեղ շատ կարեւոր է տվյալը վերածել ապացույցի, որը փաստացի չի ստացվում»:

Այսինքն՝ նախարարը հրապարակավ խոստովանեց այն, ինչի մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրում է, թե օրենքի ընդունումից՝ 2020 թվականի սեպտեմբերից սկսած, ինչպես պետք է քննիչներն ու դատախազները, ապա նաեւ դատարանը ապացուցեն՝ ով է «օրենքով գողը», ինչպես է դարձել, կամ ով է ուզում դառնալ «օրենով գող»: Հիմա՝ 5 տարի անց, ՆԳ նոր նախարարը հայտարարեց, որ քրեական ենթամշակույթին վերաբերող օրենսդրական կարգավորման մեջ պետք է կատարեն որոշակի փոփոխություններ, որպեսզի կարողանան նաեւ կարգավիճակն ունենալ ինքնին դիտարկել քրեական պատասխանատվության առարկա:

Տեղեկացնենք, որ այս պահի դրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված կարգավիճակ ստանալու, տալու եւ պահպանելու համար, սակայն կարգավիճակի գոյությունը եւ ունենալն ինքնին չի դիտարկվում որպես քրեական հանցագործություն: Այսինքն՝ իրավապահները հիմա էլ պետք է ապացուցեն՝ ով է, այսպես ասած, «օրենքով գողը»:

Թե ինչպես պետք է ապացուցեն, նախարարը չի մանրամասնել՝միայն ասելով, թե համապատասխան օրենսդրական նախաձեռնությունը առաջիկա օրերին կհանրայնացվի: Այս հայտարարությունից անցել է 22 օր, բայց նախագծից ԱԺ ՔՊ-ական պատգամավորները դեռ տեղյակ չեն:

Թեմայի վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավոր, Աննա Հակոբյանի ազգական Էդգար Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, ներքին գործերի նախարարը օրենք է բերելու՝ «գողականներին» պատժելու վերաբերյալ: Դուք ինչպե՞ս եք պարզելու՝ տվյալ անձը «գողական» է, թե՞ ոչ:

-Այդ հարցը, կարծում եմ, կարող եք Արփինե Սարգսյանին տալ:

-Բայդ Դուք պետք է քվեարկեք եւ օրենք ընդունեք, որպեսզի «գողականները» ենթարկվեն պատասխանատվության: Ինչպե՞ս եք իմանալու՝ ով է «գողական»:

-Դա իրենք պետք է պարզեն: Իրենք իրենց գործիքակազմն ունեն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԵՑ ՀՈԳԻ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ առանձնապես խոշոր չափերի տարբեր տեսակի թմրամիջոցներ, իրացնելու նպատակով, պետք է մաքսանենգ ճանապարհով Իրանից տեղափոխվեն Հայաստան:

Տեղեկությունները փոխանցվել են քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերով քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչություն: Քրեական օրենսգրքի 393-րդ եւ 399-րդ հոդվածների հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները, համագործակցելով քննչական կոմիտեի աշխատակիցների հետ, իրականացրել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Մայրաքաղաքում ձերբակալվել եւ նախաքննական մարմին է ներկայացվել Արարատի մարզի բնակիչ 25 եւ 42-ամյա երկու տղամարդ՝ վերջինիս կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ՝ ներկայացրել նախաքննական մարմին: Անձնական խուզարկությամբ Երեւանի 38-ամյա բնակչի մոտ մեթամֆետամինի նմանվող զանգված է հայտնաբերվել: Քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկությամբ «Օպելի» սրահում հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող շուրջ 1 կգ 178 գրամ զանգված: Նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ: Վեց անձ կալանավորվել եւ տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Կատարվում է նախաքննություն:

Քրեական վարույթի շրջանակներում կատարված խուզարկությամբ «Մերսեդեսի» սրահում հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող շուրջ 1 կգ 224 գրամ զանգվածով փաթեթ:

Քրեական ոստիկանության ծառայողները Քննչական կոմիտեի գործընկերների հետ Եղվարդի խճուղում ձերբակալել են հինգ տղամարդու, որոնցից երկուսը՝ օտարերկրացի, եւ նրանցից մեկի «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ՝ներկայացրել նախաքննական մարմին: Անձնական խուզարկությամբ Երեւանի 38-ամյա բնակչի մոտ մեթամֆետամինի նմանվող զանգված է հայտնաբերվել: Քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկությամբ «Օպելի» սրահում հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող շուրջ 1 կգ 178 գրամ զանգված: Նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ: Վեց անձ կալանավորվել եւ տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Կատարվում է նախաքննություն:

ԻՆՉԻՑ Է ԵՐԵԽԱՆ ՄԱՀԱՑԵԼ

Նախօրեին ողբերգական դեպք է տեղի ունեցել Արմավիրի մարզում. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ «կենսաբանական մահ» ախտորոշմամբ Արմավիրի շտապօգնության խմբի կողմից հիվանդանոց է տեղափոխվել երեխայի դի: Հիվանդանոց են մեկնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետ Արթուր Բդոյանը, վարչության պետի տեղակալ Հովհաննես Արիստակեսյանն ու ՀՀ ՆԳՆ Ոստիկանության համայնքային գլխավոր վարչության Արմավիրի բաժնի բաժնի պետ Վոլոդյա Գեւորգյանը:

Ոստիկանները պարզել են, որ մահացածը Արմավիրի մարզի բնակիչ 2,5-ամյա Հ. Թ.-ն է եւ տղան ժամը 08:00-ի սահմաններում իրենց տանը հանկարծամահ է եղել: Ահազանգով ժամանել են նաեւ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության խումբը՝ վարչության պետ Հրաչյա Ղազարյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Դեպքի փաստով Արմավիրի մարզային քննչական վարչությունում «սպանություն, հանկարծամահություն» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՆՓՈՓՈԽ ԵՆ

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը այց է իրականացրել արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ:

Նա շրջայց է կատարել տարածքով, այցելել հիվանդասենյակներ, ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց պահման պայմաններն ու առողջության պահպանման իրավունքի իրացման հետ կապված եւ այլ հարցեր: Այնուհետեւ Մարդու իրավունքների պաշտպանն ու ՄԻՊ ներկայացուցիչներն առանձին հանդիպումներ են ունեցել ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ օտարերկրացիների հետ, որի ընթացքում վերջիններս ներկայացրել են իրենց խնդիրները:

Հիմնարկում պահվող անձինք, ի թիվս այլնի, բարձրաձայնել են խնդիրներ՝ կապված տրանսպորտային միջոցների սակավության կամ ընդհանրապես չլինելու պատճառով դատական նիստերի տեւական ժամանակ ձգձգման, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, արտաքին աշխարհի հետ կապի, հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող իրավաբանական օգնության, օտարերկրացիների կրոնական առանձնահատկությամբ պայմանավորված սննդի տրամադրման անհրաժեշտության հետ: Բարձրացվել են նաեւ ֆունկցիոնալության գնահատման գործընթացի եւ հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատման վերաբերելի հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանը վերոնշյալ խնդիրներին բազմիցս է անդրադարձել, մասնավորապես՝հրապարակային մտահոգություն է հայտնել կալանավորված անձանց՝ քրեակատարողական հիմնարկից դատական նիստերին չտեղափոխելու պրակտիկայի, ինչպես նաեւ ազատությունից զրկված անձանց բժշկական օգնության պատշաճ ապահովման վերաբերյալ: Խիստ մտահոգիչ է, որ տարիներ շարունակ բարձրացրած խնդիրները մնում են անփոփոխ եւ արդիական, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների անբավարարության հարցը: Պաշտպանը կարեւորում է նաեւ ազատությունից զրկման վայրերի շենքային պայմանների բարելավման հարցը, ինչը պետք է արժանանա առաջնահերթ ուշադրության:

Այցի արդյունքները կամփոփվեն, Պաշտպանի լիազորությունների շրջանակում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը կարեւորում է նաեւ քրեակատարողական ծառայողների աշխատանքային պատշաճ պայմանների ապահովման հետ կապված հարցերը, որոնք եւս հատուկ քննարկման առարկա կդառնան իրավասու մարմինների հետ հաղորդակցության շրջանակներում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 4-ից 5-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 133 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ

Դիլիջան քաղաքի մշակույթի կենտրոնի հիմնանորոգումը 3 տարի է ընթանում էր, աշխատանքները հիմա դադարեցված են: Այն իրականացնում էր «Արդիանշին» ՍՊԸ-ն: Դիլիջանից հայտնեցին, որ մշակույթի կենտրոնի աշխատողները, գտնվելով հարկադիր պարապուրդի մեջ, ստանում են աշխատավարձի 2/3 մասը: Տեղեկացանք, որ «Արդիանշին»

ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել, վերանորոգման աշխատանքների նոր մրցույթ է անցկացվելու: «Արդիանշին» ՍՊԸ-ն Դիլիջան քաղաքում իրականացրել է նաեւ բազմաբնակարան մի քանի շենքերի ջերմամեկուսացման աշխատանքները: Դիլիջանի բնակիչները հայտնում են, որ վերանորոգող ընկերությունը քաղաքի մշակույթի կենտրոնի ներսի հատվածի նորոգման աշխատանքները հավուր պատշաճի չի իրականացրել: Դիլիջան համայնքի ղեկավար, ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը անցած 3 տարում մշակույթի կենտրոնի վերանորոգման գործի հանդեպ ինչո՞ւ պատշաճ վերահսկողություն չի իրականացրել: 2024 թ. դեկտեմբերի 4-ին Տավուշի մարզպետարանի կողմից մշտադիտարկվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ հարցում ենք կատարել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին: Մարզպետարանից պատասխանել են, որ մարզպետարանի կողմից մշտադիտարկվող ծրագրերից մեկում առկա է ժամկետի ուշացում, դա Դիլիջանի մշակույթի տան հիմնանորոգման ծրագիրն է «...որի համար ձեռնարկվել են միջոցներ 2025 թվականի առաջին եռամսյակում ավարտելու համար»: Ահա այսպես են «միջոցներ ձեռնարկել»:

14 ՏՆՕՐԵՆԻ ՀԱՍՏԻՔ ԹԱՓՈՒՐ Է

Վերջերս ուսուցիչների թափուր հաստիքները զբաղեցնելու համար մրցույթներ էին հայտարարվել Դիլիջան համայնքի Հովք եւ Բերդ համայնքի Վերին Ծաղկավան գյուղերի միջնակարգ դպրոցներում: Սակայն այդ մրցույթները չկայացան, որովհետեւ մասնակիցներ չեղան, միայն Վերին Ծաղկավանի դպրոցում ՆԶՊ-ի ուսուցչի թափուր հաստիքը համալրվեց: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հետեւյալ հարցումն ենք արել. «Փետրվարի 24-ի դրությամբ որքա՞ն է Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների ու ուսուցիչների օգնականների թափուր հաստքիների թիվը»: Մարզպետարանից հայտնել են. «2024 թվականի փետրվարի 24-ի դրությամբ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցչի 76 թափուր հաստիք, որոնց մասին սահմանված կարգով պարբերաբար կայքերում տեղադրվում են հայտարարություններ (բոլոր առարկաները դասավանդվում են այլ մասնագետների կողմից), իսկ 14 դպրոցում առկա է տնօրենի թափուր հաստիք»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՈՒՐ Է ԳՆՈՒՄ ՀԵՐՈՍ ՀԱՐԿԱՏՈՒԻ ԳՈՒՄԱՐԸ

Երեկ «Հետֆն» անդրադարձել է ԱՆԻՖ-ի կողմից իրականացված մի ծրագրի, համաձայն որի՝ 1,5 միլիարդ դրամ է տրվել մի կազմակերպության, որի բաժնետերերը գրանցված են օֆշորում, որի տնօրենը հանդիսանում է Տիգրան Ավինյանի կնոջ ընկերուհին, եւ որոնք նաեւ համատեղ մեկ այլ կազմակերպությունում համասեփականատեր են, այսինքն՝ նրանց կապը անհերքելի է եւ փաստ է: Այս մասին երեկ՝ մարտի 5-ին՝ ԱԺ-ում հարցուպատասխանի ժամանակ հայտարարեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանը:

«Ծրագրի նպատակն էր կիբեռանվտանգային ոլորտում մասնագետներ պատրաստելը: Այսինքն՝ Տիգրան Ավինյանը, հանդիսանալով ԱՆԻՖ-ի խորհրդի նախագահ, իր կնոջ ընկերուհու կողմից ընդամենը ութ օր առաջ ստեղծված կազմակերպությանը փոխանցում է 1,5 միլիարդ դրամ՝ իրականացնելու մի ծրագիր, որը որեւէ արդյունք չի ունեցել, որեւէ կիբեռանվտանգության մասնագետ չկա, որեւէ արդյունք չկա:

Երբ ամեն անգամ խոսում եմ սրանից, դուք գալիս ասում եք՝ հա, դե խայտառակություն է եղել, շատ վատ բան է եղել, բայց ՀՀ քաղաքացուն դրանից ի՞նչ: Կոռուպցիան ուրիշ ի՞նչ տեսք է ունենում»,- ասաց նա:

Ի պատասխան՝Նիկոլ Փաշինյանը շատ կարճ ասաց. «Ո՞վ, ո՞ւմ, ե՞րբ, ինչո՞ւ, ինչքա՞ն, դրա համար կան Հայաստանում ինստիտուտները, այդ ինստիտուտները թող պարզեն: ՀՀ-ում բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ, Կոռուպցիայի դեմ պայքարը ինձ համար եղել եւ շարունակում է մնալ առաջնահերթություն ու չի դադարելու լինել առաջնահերթություն»:

Աննա Գրիգորյանը շարունակեց. «Այս ընթացքում գույքահարկը թանկացել է, շրջհարկը թանկացել է, կարմիր գծերը թանկացել են, աղբահանության գումարը թանկացել է, նույնիսկ սուրճի ապարատների համար տրվող գումարը բարձրացրել եք, թե բա՝ «հերո՛ս հարկատու, գումարը վճարե՛ք, որ մենք ավելի լավ պետություն ստեղծենք»: Հերոս հարկատուն գումարը վճարում է, Տիգրան Ավինյանը 1,5 միլիարդ տանում, տալիս է իր կնոջ ընկերուհուն, ով ուղղակի վատնում է այդ գումարը: Հիմա հերոս հարկատուն սա որպես ի՞նչ լսի, ի՞նչ մեսիջ ստանա: Իսկ ձեր այն փաստարկը, թե, գիտեք, համապատասխան մարմինները քննություն են իրականացնում եւ այլն, բացարձակ համոզիչ չէ, որովհետեւ արդեն շուրջ երեք տարի այդ քննությունը ընթանում է, ձեւի համար մի հոգի գործում ներգրավված չէ: Ինչը նշանակում է, որ ուղղակի կասեցված է պրոցեսը»:

Նիկոլ Փաշինյանն էլ արձագանքեց. «Տիկին Գրիգորյան, նախ դուք իրավունք չունեք որեւէ մեկի անմեղության կանխավարկածը խախտելու, եթե անմեղության կանխավարկածի հարց է, այդ թվում մեր երկրի հարազատ հանքարդյունաբերության հետ կապված, բոքսի «պերչատկեքով» մեկը կար (նկատի ունի նախկին պատգամավոր Վահե Հակոբյանին-խմբ), այդտեղ նստած, հիմա չգիտեմ էլ՝ ուր է, նրա անմեղության կանխավարկածի մասին մտածեիք, որը, իմիջիայլոց, ձեզ հետ էլ էին որոշ ձեւերով կապում:

Ես ասում եմ, որ կա պրոբլեմ, այո, ո՞վ է մեղավոր, ինչպե՞ս է մեղավոր, դրա համար երկրում կան ինստիտուտներ»:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Մարտի 5-ին լրացավ Գյումրի եւ Փարաքար համայնքների արտահերթ ընտրությունների առաջադրման վերջնաժամկետը: Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 128 հոդվածի, 5-րդ մասի համաձայն՝ ընտրություններին մասնակցելու ցանկություն ունեցող քաղաքական ուժերը փաստաթղթերը կարող են ներկայացնել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 25 օր առաջ, այսինքն՝ մինչեւ մարտի 5-ը՝ ժամը 18:00-ն: Իսկ ընտրական ցուցակների գրանցումը տեղի է ունենում 5-օրյա ժամկետում:

Նախընտրական քարոզչությունը երկու համայնքներում պաշտոնապես մեկնարկելու է մարտի 15-ից մինչեւ մարտի 28-ի 24:00-ն: Քվեարկությունը սկսվելու է մարտի 30-ին՝ ժամը 08:00-ին, ավարտվելու՝ նույն օրը՝20:00-ին:

Գյումրիում, ի տարբերություն Փարաքարի, ավելի թեժ ընտրություններ են սպասվում: Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքի՝Գյումրու ղեկավարի պաշտոնի համար պայքարելու են մի քանի թեկնածուներ: Իշխող ՔՊ-ի թեկնածուն համայնքապետի ժ/պ Սարիկ Մինասյանն է, որն անկուսակցական էր, սակայն ՔՊ-ի նախնական ընտրությունների արդյունքում հաղթելուց հետո՝անդամագրվեց իշխող ուժին:

Նախկին համայնքապետ Վարդան Ղուկասյանը նույնպես առաջադրել է իր թեկնածությունը, համայնքապետի պաշտոնի համար կպայքարեն նաեւ ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանը, պրոդյուսեր Ռուբեն Մխիթարյանը, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը, որը «Եվրադաշինքի» միասնական թեկնածուն է, Արտյոմ Թումանյանը, որը դեռ չի հայտնել՝ որ կուսակցությամբ է մասնակցելու:

«Ապրելու երկիր» կուսակցությունը եւս կմասնակցի Գյումրի համայնքի ավագանու ընտրություններին. ցուցակը գլխավորում է Կարեն Մալխասյանը, իսկ Սուրեն Սուրենյանցի «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը մասնակցում է Գյումրու ՏԻՄ ընտրություններին, թեկնածուն Արա Ղարաղազարյանն է:

Փարաքարի ընտրությունների դեպքում թեկնածուներն այնքան էլ շատ չեն: Իշխող ուժի թեկնածուն Լյուդվիգ Գյուլնազարյանն է, որը նախկինում եւս համայնքի ղեկավարի պաշտոնն է զբաղեցրել, սակայն քրեական պատմության կենտրոնում հայտնվելուց հետո հրաժարական ներկայացրեց: «Ապրելու երկիր» եւ «Հաղթանակ» կուսակցությունները Փարաքարի ընտրություններում կմասնակցեն համատեղ՝ «Միասնություն» դաշինքով: Ցուցակը կգլխավորի «Ապրելու երկիր» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Վալոդյա Գրիգորյանը, իսկ Փարաքար համայնքի նախկին ղեկավար Դավիթ Մինասյանը ընտրություններին կմասնակցի «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակով:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱԼԻԵՎԻ ԱՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում գործող Կովկասյան ռազմավարական վերլուծությունների Kafkassam կենտրոնը հրապարակել է հոդված Իլհամ Ալիեւի թուրքական այցի իրական նպատակի մասին: Ենթադրվում է, որ Ադրբեջանի նախագահը Թուրքիա է մեկնում Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի շուրջ ընթացող բանակցությունների վերաբերյալ քննարկումներ անցկացնելու համար: Այս մասին հայտնում է Ermenihaber.am-ը:

Ջուգահեռ նշվում է, որ Ալիեւը մտափոխվելով արդեն պիտի առանց նախապայմանների ստորագրի Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան եռակողմ խաղաղության փաստաթուղթը: Բացի այդ, խոսվում է այն մասին, որ այլեւս առկա չէ այն պատճառը, ինչից ելնելով Թուրքիան փակել էր Հայաստանի հետ սահմանը, ուստի, այժմ այդ իրողությունը ստիպում է ստորագրել եռակողմ խաղաղություն:

Հիշեցնենք, որ Իլհամ Ալիեւը մարտի 5-ին Անկարա է մեկնել հանդիպելու Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

Թուրքական կողմի պաշտոնական հայտարարության համաձայն՝ օրակարգում են եղել երկկողմ հարաբերությունները, ինչպես նաեւ տարածաշրջանային եւ համաշխարհային ընթացիկ զարգացումները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 27 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Ճավճավաձեի փողոց, 10 հասցեում գտնվող 173,93 քմ բնակելի տուն, 17,64 քմ ավտոտնակ, 8,1 քմ անասնաշենք եւ 0,0454 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14010000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.03.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 24.04.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՏԱՐԵԴԱՐՁ

Ի՞ՆՉ ԵՆՔ ԺԱՌԱՆԳԵԼ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՑ

Երեկ Հայաստանի Ազգային հերոս, Արցախի հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրն էր: Սպարապետը կդառնար 66 տարեկան:

Վազգեն Սարգսյանը ծնվել է 1959 թվականի մարտի 5-ին Խորհրդային Հայաստանի Արարատ գյուղում, Գրետա եւ Զավեն Սարգսյանների ընտանիքում: Իր գյուղի միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո՝ 1976-1979 թթ. սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: 1979-1983 թթ. աշխատել է գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Այդ պատճառով ազատվել է ԽՍՀՄ բանակում ծառայելու պարտականությունից:

1983-1986 թթ. եղել է Երիտասարդ կոմունիստների լիգայի ղեկավար՝ Արարատի ցեմենտի գործարանում:

Սարգսյանը ակտիվ գրական եւ հասարակական գործունեությամբ է զբաղվել: Իր առաջին վեպը գրել է 1980 թվականին եւ 1985 թվականին դարձել Հայաստանի գրողների միության անդամ: 1986-1989 թթ. գլխավորել է «Գարուն» ամսագրի հրապարակախոսության բաժինը:

1986 թթ. հրատարակվել է նրա առաջին գիրքը՝ «Հացի փորձություն»-ը, եւ արժանացել ՀԼԿԵՄ ամենամյա մրցանակին: Գեղարվեստական ստեղծագործություններից բացի նա մեծ թվով հրապարակախոսական հոդվածներ է գրել մամուլում, բայց նրա գրական կարիերան ընդհատվել է 1980-ական թվականների վերջին:

Վազգեն Սարգսյանի արած գործն անուրանալի է հայոց համար: Սպարապետի մասին մինչ օրս հիշում են հիացմունքով, թախիծով եւ հպարտությամբ, քանի որ Սպարապետի պես մարդիկ լույս աշխարհ են գալիս 100 տարին մեկ անգամ:

ArmLur.am-ը ներկայացնում է Վազգեն Սարգսյանի հայտնի մտքերից:

«Դարերի մեռած պատմությունը թափ տվեք ձեր հոգուց, մի՛ մեռեք ձեր տան մեջ: Ձեր հոգու մեռելներին թաղեք: Էս երկիրը ձերը չէ, դուք գալիս-անցնում եք, ձերը էս երկրի սիրտը պահելն է: Սիրտը»:

«Յուրաքանչյուր ժողովուրդ՝ լինի 3 միլիոնանոց, թե 300 միլիոնանոց, միշտ իր միջից կարող է հանել այնքան մարդ, որոնք կարող են երկիրը պահպանել»:

«Ինձ ժողովուրդը չի ճանաչում: Ինձ նորմալ ճանաչում են իմ նեղ շրջապատի մարդիկ: Մնացյալը գիտեն ինձ մորուքով, գիտեն ջղայնացած, գիտեն քրտնած, այսօրվա եղած կերպարը դա է»:

«Չգիտեմ՝ համաշխարհայի՞ն ազգ ենք, թե՞ ոչ, բայց պարտավոր ենք համաշխարհային գործոն դառնալ, դա փաստ է»:

«Ես երջանիկ մարդ եմ: Որովհետեւ ինձ պատիվ ընձեռվեց իրականացնել այն երազանքները, որպիսիք փայփայում էինք գրողներս, լրագրողներս: Բայց դա բախտի բան չէ, ես եմ ընտրել իմ ճանապարհը: Երբ այդ ուղին ընտրեցի, չգիտեի, որ նախարար եմ դառնալու: Իմ գրած նախադասությունների համար չեմ կարմրում, կեղծիք չկա: Ես հիմա էլ, որպես պաշտպանության նախարար, ինչ անում եմ՝ դարձյալ կեղծիք չկա: Սխալմունքներ կան, բայց կեղծիք չկա»:

«Ավելի լավ է մեկ մոմ վառել, քան հավերժ բողոքել խավարից»:

«Ես աշխարհում ամենից շատ սիրում եմ ծերերին եւ երեխաներին, այդ երկուսն են անպաշտպան»:

«Մենք ընտիր-ընտիր հպատակ ենք, մենք խելոք-խելոք կատարող ենք, մենք հայտնագործություն ենք ուրիշի ձեռքի տակ: Հայ մարդ, հիմա ուրիշը դու ես: Քո ուրիշը դու ես»:

«Բանակն ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլոր հայերի ծնունդն է, հայության հավաքական կերպարն է, նրա պատասխանատվությունը, նրա պատմության վերագնահատումը եւ հայացքը ապագային: Սիրուն խոսքեր չեմ ասում, ընդամենը ճշմարտությունն եմ ասում»:

«Աշխարհի ուժեղները, տեսեք, թե ուր են հասել, իսկ մենք դեռ մտածում ենք՝ շտապել, թե չշտապել, «ըսել, թե չըսել»: Ինչի՞ն սպասել՝ Հայաստանի տնտեսության վերջնական կանգառի՞ն... Հայաստանի հայթափմանը, թե՞ մինչեւ աղանդավորները առաքելականներիցս ավելի մեծ թիվ կկազմեն...»

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՉՈՐ ՀՈՒՆՎԱՐԸ

Այս տարվա հունվարը Հայաստանում օդերեւութաբանական դիտարկումների ողջ 90-ամյա պատմության մեջ երկրորդ ամենաչոր հունվարն է: Այս մասին ասել է «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Լեւոն Ազիզյանը: Ըստ նրա՝ ամենատաքը եղել է 1999 թ. հունվարը: Ըստ ներկայացված տվյալների՝ 2025թ. հունվարին Հայաստանում օդի միջին ջերմաստիճանը եղել է -4,4 աստիճան, որը նորմայից բարձր է 2,4 աստիճանով, իսկ տեղումների քանակը նորմայի միայն 18 տոկոսն է կազմել: «2024թ. դեկտեմբերին Հայաստանում օդի միջին ջերմաստիճանը եղել է -2,8 աստիճան, որը նորմայից բարձր է 1,1 աստիճանով, իսկ տեղումների քանակը նորմայի 40 տոկոսի չափով է եղել»,- նշել է Ազիզյանը: Նա տեղեկացրել է, որ 2025թ. փետրվարին օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է -6,7 աստիճան, ինչը նորմայից ցածր է 1,5 աստիճանով: ՊՈԱԿ տնօրենն ավելացրել է, որ փետրվարի առաջին կեսին Հայաստանի շրջանների զգալի մասում օդի ջերմաստիճանը նորմայից բարձր է եղել 2-3 աստիճանով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Գագիկ Ցոլակի Կիրակոսյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ՀՀ, Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, գյուղ Սասունիկ, Կարին թաղամաս, 3-րդ փողոց, 8 հասցեում գտնվող 251,8 քմ բնակելի տուն եւ 0,0848 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 35820000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.03.2025թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.borsa.am կայքերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ. ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ՀԱՅ ԱՐԿԱԾԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՊԵՏԸ

Հայ գրականության մեջ որսորդական, արկածային գրականության հիմնադիրը Վախթանգ Անանյանն է: Հայ գրող, լրագրող, արձակագիր Վախթանգ Անանյանն իր ուրույն տեղն ունի հայ գրականության մեջ: Նախօրեին գրողի հիշատակի օրն էր:



ArmLur.am-ը ներկայացնում է գրողի կյանքը:

Վախթանգ Անանյանը ուսումը հարկադրված կիսատ է թողել, քանի որ չեն կարողացել վճարել ուսման վարձը: Չնայած այդ հանգամանքին՝ այնուամենայնիվ, Անանյանին մինչեւ օրս հիշում են: Անանյանը սովորել է Դիլիջանի ծխական դպրոցում եւ մանկությունն էլ անցկացրել է հենց Դիլիջանում: Ուսումը կիսատ թողնելու մասին ապագա գրողն ասել է. «Ավարտվեց իմ ուսման ժամանակաշրջանը: Դրանից հետո իսկական դպրոց այլեւս չեմ տեսել: Իմ դպրոցը եղել է մայր բնությունը, որի գրկում ես մեծացել եմ»:

Լրագրողի իր աշխատանքը սկսել է «Մաճկալ», «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթերի խմբագրություններում: Հեղինակը նաեւ աշխատել է որպես պատասխանատու-խմբագիր՝ «Կոլխոզնիկ» թերթի խմբագրությունում:

Վախթանգ Անանյանը, հանդիսանալով հայ գրականության մեջ արկածային ժանրի գրականության հիմնադիրը, ստեղծել է չինացող, մնայուն եւ կարեւոր արժեքներ:

Իր իսկ գրչին պատկանող «Սեւանի ափին» եւ «Հովազաձորի գերիները» ստեղծագործություններում գրողն իր փոքրիկ, ինչու ոչ նաեւ մեծ ընթերցողներին պատմում է կարեւորի՝ իրական ընկերության մասին, որը մեր օրերում շատ քիչ է: «Սեւանի ափին» ստեղծագործությունը կարելի է նաեւ առանձնացնել գրքում պատկերված, նկարագրված մարդասիրության, հայրենասիրության, բնության շքեղաշուք նկարագրությունների համար:

Հայ մեծերից Պարույր Սեւակը Վախթանգ Անանյանի «Սեւանի ափին» ստեղծագործության մասին ասել է. «Վ. Անանյանի «Սեւանի ափին» վիպակը մի նոր նվաճում է ինչպես հեղինակի, այնպես էլ մեր գրականության համար: Նա գրում է հյութեղ, պարզ ու հասկանալի, ժողովրդական բառ ու բանով հարուստ, հետաքրքիր լեզվով: Նրա լեզվամտածողությունը գերազանցապես հայերեն է՝ զերծ օտարություններից»:

Իր այս երկու ստեղծագործություններում գրողը բացել է մի նոր կախարդական աշխարհ, որոնք, ի դեպ, մեծ ճանաչում են բերել նրան:

Գրողի առաջին ստեղծագործությունը՝ «Չոլախ կատուն», տպագրվել է «Պիոներ» ամսագրում 1927 թվականին, իսկ առաջին վիպակը՝ «Կրակե օղակի մեջ»-ը լույս է տեսել 1930 թվականին:

Երեւանի Կենտրոն համայնքում՝ Հակոբ Պարոնյան փողոցի թիվ 1 բնակելի շենքի առջեւ, տեղադրվել է Վախթանգ Անանյանի կիսանդրին: Ի դեպ, 1953-1980 թվականներին այդ շենքում է բնակվել անձամբ ինքը՝ Անանյանը:

Դիլիջանում գործում է Վախթանգ Անանյանի անվամբ դպրոց:

Վ. Անանյանի 100-ամյա հոբելյանին, որը 2006 թվականին էր, տպագրվել է «Վախթանգ Անանյան 1905-1980» նամականիշ, իսկ 2023 թվականին, Երեւանի ավագանու որոշմամբ, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շահումյանի 16-րդ փողոցն անվանակոչվել է Վախթանգ Անանյանի անունով:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԹԵՆԻՍԻՍՏԸ ԽՈՍԵԼ Է ՄՐՑԱՇԱՐԻՑ

Աշխարհի 39-րդ ռակետ Էլինա Ավանեսյանը խոսել է Հայաստանը ներկայացնելու մասին, հայտնում է Մերիդայի WTA-500 շարքի մրցաշարի մամուլի ծառայությունը: «Ինձ համար շատ կարեւոր է Հայաստանը ներկայացնելը: Մրցաշարերում Հայաստանը ներկայացնող թենիսիստուհիներ երբեք չեն եղել: Ցանկանում եմ օրինակ լինել այն երկրի համար, որտեղից ծնողներս են: Հայաստանը նաեւ աջակցում է իմ կարիերայի զարգացմանը»,- ասել է 22-ամյա թենիսիստուհին: Էլինա Ավանեսյանը նախորդ շաբաթ մասնակցել է Մերիդայի մրցաշարին եւ դարձել առաջին հայը, որը հասել է WTA-500 շարքի մրցաշարի կիսաեզրափակիչ: Նա 2024 թվականի օգոստոսից է ներկայացնում Հայաստանը, իսկ մինչեւ այդ հանդես էր գալիս Ռուսաստանի դրոշի ներքո:

ԾԱՆՐԱՄԱՐՏԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԾՐԱԳՐՈՒՄ

Ծանրամարտ մարզաձեւն ընդգրկվել է Եվրոպական խաղերի ծրագրում: Որոշումը կայացել է Ֆրանկֆուրտում անցկացված ԵՕԿ-ի համաժողովում: Այս մասին հայտնում է ՀԱՕԿ-ի պաշտոնական կայքը: Մարզաձեւի եվրոպական ֆեդերացիայի նախագահ Անտոնիո Կոնֆլիտին ասել է, որ 2022թ. աշխատում է հարցին լուծում տալու համար: Եվրոպական չորրորդ խաղերը կանցկացվեն 2027թ. Ստամբուլում: Ծանրահարթակ կելնի օլիմպիական քաշային կարգերի ավելի քան 300 մարզիկ-մարզուհի: Այդ ստուգատեսը նաեւ վարկանիշային կլինի 2028թ. կայանալիք Լոս Անջելեսի ամառային Օլիմպիական խաղերի համար:

ՀԱԳԸ ՉԻ ԳԼԽԱՎՈՐԻ «ԼԱՅՊՑԻԳԸ»

Հոլանդացի մասնագետ Էրիկ տեն Հագը չի գլխավորի գերմանական «Լայպցիգը»: Այս մասին հայտնում է Sky Sports-ը: Աղբյուրի համաձայն՝ «Լիվերպուլի» նախկին գլխավոր մարզիչ եւ «Ռեդ Բուլի» միջազգային ֆուտբոլի բաժնի ներկայիս ղեկավար Յուրգեն Կլոպը մերժել է Տեն Հագի թեկնածությունը: Փոխարենը Կլոպը «Լայպցիգին» առաջարկել է երեք թեկնածու՝ Սեբաստիան Հյոնես («Շտուտգարտ»), Օլիվեր Գլասներ («Քրիսթալ Փելաս») եւ Ռոջեր Շմիդտ («Բենֆիկայի» նախկին մարզիչ): Հիշեցնենք, որ Էրիկ տեն Հագն անցյալ տարվա հոկտեմբերի 28-ին լքել է «Մանչեսթեր Յունայթեդի» գլխավոր մարզչի պաշտոնը եւ նրան փոխարինել է Ռուբեն Ամորիմը: 26 տուրից հետո «կարմիր սատանաները» Պրեմիեր լիգայի մրցաշարային աղյուսակի 15-րդ տեղում են:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Ո՞Ր ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻՑ Է «ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ» iPhone 17-Ը

Ամբողջ աշխարհը գրաված iPhone-ը շարունակում է ցնցել բրենդի երկրպագուներին: Բոլորովին վերջերս թողարկված iPhone 16-ի շուրջ առաջացած հետաքրքրությունը դեռ չմարած, հերթը արդեն iPhone 17-ինն է: Apple ապրանքանիշն այս անգամ եւս կենտրոնացել է դիզայնի վրա:

Նոր iPhone 17-ն ունենալու է աներեւակայելի բարակություն, սակայն այդ բարակության հաշվին Apple-ը պատրաստ է հրաժարվել մի քանի հիմնական գործառույթներից: ArmLur.am-ը տեղեկացավ, որ iPhone 17-ը կարող է զրկվել ներքին բարձրախոսից, ֆիզիկական SIM քարտի բնիկից: Համացանցում հրապարակված 3D-ռենդերները հաստատում են այն հանգամանքը, որ նոր iPhone-ը հրաժարվում է ներքին բարձրախոսից: Նոր iPhone-ի տեսախցիկներից հեռացվելու է նաեւ 0,5x ռեժիմով լուսանկարելու հնարավորությունը, սակայն 1x եւ 2x տարբերակները լինելու են: SIM քարտերից հրաժարվելը 2022 թվականից, կարելի է ասել, դարձել է «ավանդույթ» Apple ապրանքանիշի համար եւ առաջին այֆոնը, որը հնարավորություն է ունեցել առանց SIM քարտի աշխատելու, եղել է iPhone 14-ը:

Այսպիսով, Apple ապրանքանիշը մտադիր է iPhone 17 Air-ի բոլոր տարբերակներից հեռացնել SIM քարտի բնիկը: iPhone 17-ի մասին հայտարարությունը հավանաբար կարվի սեպտեմբեր ամսին, ինչպես արվում է ավանդաբար, սակայն պատրա՞ստ են արդյոք iPhone-ի սիրահարները նոր փոփոխություններով բջջային օգտագործել, թե՞ ոչ, միայն ժամանակը կպարզի:

ՀԱՄԱՏԵՂ ԵՐԳ

Հայտնի եւ սիրված երգիչներ Սարո Թովմասյանն ու Արման Հովհաննիսյանը նորություն ունեն իրենց երկրպագուների համար: Հայազգի երգիչները համատեղ երգ են ներկայացրել հանրության եւ երկրպագուների դատին: Երգը կոչվում է «Սիրենք կյանքը»: 1 օրվա ընթացքում տեսահոլովակի դիտումները յութուբյան հարթակում հատել են 135 հազարը եւ հավաքել 3000-ից ավելի հավանում: Երգի խոսքերի հեղինակը Ավետ Բարսեղյանն է, իսկ երաժշտության հեղինակը՝ Գուրո Գասպարյանը: Նշենք, որ սա երգիչների առաջին համատեղ գործը չէ:

Նյութերը՝ ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԻ

● *Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը մարտի 20-ին տեղի կունենա «Տոնական համերգ. «Ազնավուր» փառատոնը: Տոմսերի արժեքը՝2000, 3000, 5000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ցանկացած մարդ, ով հավատում է, կարո՞ղ է քարոզել եւ տարածել Աստծո խոսքը, թեեւ գիտեմ, որ դրա համար երկար տարիներ ուսում են ստանում եւ ձեռնադրվում մեր եկեղեցու քահանաները:

Գայանե Հունանյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ յուրաքանչյուր մարդ կարող է Աստծո խոսքը տարածել, բայց ոչ հռչակել իրեն միակ եւ ճիշտ քարոզիչ եւ ճշմարտություն ուսուցանող հոգեւոր հովիվ: Կարելի է բարեկամներին, հարեւաններին բացատրել քրիստոնեական ճշմարտությունը, որով եւ կատարվում է սրբազան պարտականություն: Այսօր հովիվ եւ քարոզիչ դառնալը միայն հոգու կանչով չպետք է սահմանափակվի: Քանի որ այս դարը ինֆորմացիայի դար է, ապա քարոզիչը պետք է հսկայական ինֆորմացիայի տիրապետի, որպեսզի ոչ միայն կարողանա Աստծո խոսքը փոխանցել, այլեւ այդ խոսքը մատչելի դարձնել ցանկացած խավի եւ ցանկացած մասնագիտության տեր մարդու: Իսկ դրա համար տարիներ են պետք, որպեսզի անհատից հզոր քարոզիչ ձեւավորվի:

Ուստի, քարոզիչը ոչ միայն հավատացյալ անձ պետք է լինի, այլ նաեւ համապատասխան կրթություն ստացած անհատ, որպիսիք են այսօր Հայ եկեղեցու հոգեւոր սպասավորները: Սա չի նշանակում, որ եթե մեկը ցանկություն ունենա Հայ եկեղեցու վարդապետությունն իր մտերիմին կամ բարեկամին հասցնել, չունի դրա իրավունքը: Նա կարող է այդ մարդուն եկեղեցի բերել, ծանոթացնել հոգեւոր հովվի հետ՝ հորդորելով մշտապես հոգեւոր խորհուրդներ ստանալ: Սա նույնպես ծառայություն է Աստծուն:

Օրինությամբ՝ Տ. Շմավոն քահանա Ղեւոնդյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ստացվում է, որ յուրաքաչյուր անձ, որն իրեն մոտ է համարում Աստծուն եւ եկեղեցուն, կարող է հնարավորություն ունենալ իր ծառայությունները մառուցելու հոգեւոր աշխարհին:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք՝ ինչով են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:

Մարինե Ալեքսանյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նշենք, որ ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար, ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը: Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ օրինակ ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների ազդեցության արդյունք է:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող է փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ պաշտոնական լրահոսից

Երեկ խոշոր ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Հալաբյան-Արզումանյան փողոցների խաչմերուկում բախվել են 23-ամյա Ջիվան Հ.-ի վարած Porsche Macan մակնիշի ավտոմեքենան եւ 28-ամյա Յուրի Հ.-ի վարած, Երեւանի քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված Երեւանի թիվ 7 երթուղին սպասարկող Zhong Tong մակնիշի ավտոբուսը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-9 - 12 -4 - 7
Կոտայքի լեռներ	-11 - 14 -5 - 7
Կոտայքի նախալեռներ	-6 - 10 -1 - 3
Գեղարքունիք	-12 - 17 -6 - 8
Լոռի	-10 - 15 -3 + 1
Տավուշ	-5 - 8 -2 + 2
Արագածոտնի լեռներ	-10 - 15 -6 - 10
Արագածոտնի նախալեռներ	-6 - 9 0 - 3

Արարատ	-4 - 7 0 + 2
Արմավիր	-6 - 9 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-15 - 20 -6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	-6 - 11 0 - 3
Սյունիքի հովիտներ	-5 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	-12 - 17 -2 - 5
ԼՂՀ	-11 - 15 -2 - 4
Երեւան	-5 - 9 -4 - 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.3.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*